ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ

Հիմա, իհարկե, ոչ մեկին քաղաքականություն չես սովորեցնի: Երկու տարվա ընթացքում բոլորս այնպե՞ս ենք սովորել... Ներողամտաբար ժպտում ենք, վերհիշելով օպերայի պատին քաղբյուրոյի անդամների նկարների տակ «Մենք ձեզ հավատում ենք» կոչը կամ ստեփանակերտցիների ցույցը՝ «Լենին-պարտիա-Գորբաչով» համերաշխ ու անկեղծ վանկարկումով: Փոխվել ենք: Երևի ավելի, քան ինքը կյանքը: Եվ եթե դուք առաջվա պես լինում եք Ազատության հրապարակում, չեք կարող չնկատել, թե երեկվա քաղաքակրթն միամտությամբ տառապող մեր միտինգավորները ինչպիսի կրքոտությամբ են վերլուծում ներսի ու դրսի, ընթացիկ ու պատմական դարձերը, փորձելով տալ նաև հիմնավոր կանխատեսումներ: ԱԿ-ին այդ վերլուծությունները առաջին հերթին հետաքրքրում են արցախյան հիմնահարցի լուծման տեսանկյունից: Եվ քանի որ պարզ է, որ «Արցախ—Ադրբեջան» հարաբերությունից դուրս մեր հիմնահարցի լուծման մերձավոր պայմանները գտնվում են Հայաստանում (ժողովրդավարություն գործընթացը Միությունում և միջազգային դրությունը նույնպես էական պայմաններ են, բայց ավելի կարևոր չեն, քան նշվածը), հենց Հայաստանի քաղաքական իրադրությանն էլ նվիրվում է ԱԿ-ի «Քաղաքական շրջանակի» առաջին նյութը, որ մենք վերնագրել ենք՝

1990-Ի ԳԼԽԱՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ ՄԵԶԱՆՈՒՄ

Անկասկած է, որ դա պատմամենտական ընտրություններում կոմունիստների կրած պարտությունը և իշխանության անցումն է նոր քաղաքական ուժերին:

1990-ի թավշյա իշխանափոխության կապակցությամբ պատասխան պահանջող առաջին հարցը կոմունիստների պարտությանն է վերաբերում: Իսկապես ինչո՞ւ պարտվեցին կոմունիստները: Ապագայում մեր փոթորկահույզ օրերի մասին գրվելիք ուսումնասիրություններում այս հարցը, անկասկած, կդրվի: Աստված չանի, որ ուշադրությունից դուրս մնա գլխավոր պատճառը. կոմունիստների իշխանության արևմուտը մեր օրերում սկսվեց այն պատճառով, որ «կոմկուս» ցուցանակի տակ հավաքված մարդիկ վաղուց արդեն իրենցից կուսակցություն չէին ներկայացնում: Քաղաքական շարժումների ողջ պատմությունը հաստատում է այդ իրողությունը, որ կուսակցությունները առաջին հերթին և վերջին հաշվով հասարակական **որոշակի** խմբերի (դասակարգերի, խավերի, այլ հանրությունների) քաղաքական շահերը պաշտպանող կազմակերպություններ են: Անհնար է, որ հակամարտ հասարակական խմբերը քաղաքական պայքարում ներկայացվեն նույն կուսակցությամբ: Նույնն է, թե՝ անհնար է, որ մինչև նույն կուսակցությունը հաջողությամբ ներկայացնի հակամարտ հասարակական ուժերի քաղաքական շահերը: Դա բացառվում է ոչ միայն տեսականորեն, այլև քաղաքական շարժումների ողջ պատմական փորձով: Միակ բանը, որ չի բացառվում՝ քաղաքական զավեշտը է: Քաղաքական խաղերն են: Բայց դրանք սովորաբար կարճատև են լինում (պատմական իմաստով, իհարկե), չնայած դրանց ակամա վկաները դարձած սերունդների համար դրանք ողբերգորեն երկար են դառնում: Արդ՝ կարելի է անվարան պնդել, որ Միությունում 70 տարի ի վեր, այն բանից հետո, երբ վերացվել է բազմակուսակցությունը, կոմունիստական կուսակցություն գոյություն չի ունեցել: Այդպես կոչվել (այդ ցուցանակից օգտվել) և քաղաքական իշխանությունը իրենց ձեռքում պահել են ինչ-ինչ խմբավորումներ (սպարատներ):

Իսկապես, ո՞ւմ քաղաքական շահերն է ներկայացրել ԽՄԿԿ-ն՝ բանվորների՞, թե՞ գյուղացիների, մտավորականությա՞ն, սոցիալական այլ խավերի՞ (ասենք, ստվերայինների): Իր իսկ ասելով՝ ողջ խորհրդային ժողովրդի: Բայց հենց սա է, որ անհնար է: «Խորհրդային ժողովուրդը» իր «կազմում» ունի ոչ միայն հակամարտ շահեր ունեցող սոցիալական խմբեր ու խավեր, այլև պատմական տարբեր շահեր ունեցող ժողովուրդներ, որոնց միջև հակասությունները սրելու «առաքելությունն» են ունեցել խորհրդային կոմունիստների հայրերը՝ բոլշևիկները:

Արդեն յոթանասուն տարի է, ԽՄԿԿ-ն չի ներկայացնում որևէ **որոշակի** դասակարգ կամ խավ: Նա որևէ մեկի (դասակարգի, խավի...) կուսակցությունը չէր: Հավակնելով ներկայացնել բոլորի շահերը՝ նա դարձավ ոչ մեկինը: Եվ քանի որ նրա ձեռքին էր գտնվում քաղաքական իշխանությունը, նա դարձավ այդ իշխանության կուսակցությունը: ԽՄԿԿ-ն դարձավ կուսակցություն իր համար և ներկայացնում էր **իրեն**: «Դուրս մղելով» բազմակուսակցությունը և ժողովրդավարությունը, ԽՄԿԿ-ն հանձին իր վերնախավի, վերածվեց իշխանակիր խմբավորման, որի գլխավոր հոգսն ու խնդիրը դարձավ ինքն իրեն ծառայելը: Այդ էլ ԽՄԿԿ-ն անխուսափելիորեն դրեց բոլշևիզմների [illegible] հասարակությունների ուղու վրա: Գաղափարախոսական ծխամածկույթը, մտավակա լուսապայծառ ապագայի հայտ նորոգվող պատկերը, սին խոստումները, ձախողումների համար ներսի ու դրսի սուտ մեղավորներ հնարելը. դրանք բոլորը ողջ ժողովրդին և շարքային-մոլորված կոմունիստների գիտակցությունը մթագնելու, սեփական հանցանքները, հոչակված իդեալների և գործի միջև գոյացած վիհը քողարկելու միջոցներ էին միայն: Պատմականորեն խորհրդային պարտոկրատիան դատապարտված է պարտության: Դա զգում են բոլորը, և դրա նշաններից մեկն այն է, որ գլխավոր քարտուղարը արդեն գրավել է պրեզիդենտի ավելի ապահով տեղը, քաղբյուրոյից պրեզիդենտական խորհուրդ տանելով նաև իր մերձավոր դաշնակիցներին: Չնայած այս բոլորին, դեռ վաղ է Միության մասշտաբով (նաև՝ մեզ մոտ) պարտոկրատիայի վերջնական պարտության մասին խոսելը: Իշխանության նոր կառուցվածքի տարբեր օղակներում կուսապարատի երեկվա գործիչներն են: Կոմկուսի Կենտկոմին են անմիջապես ենթարկվում կառավարությունը, ՊԱԿ-ը, բանակը: Այնպես որ, Միության դեմոկրատական ուժերն առաջիկայում վճռական պայքարի ժամանակներ են սպասում:

Միությունը՝ Միություն, իսկ Հայաստանում կոմունիստները արդեն որոշակիորեն իշխանությունը զիջել են նոր քաղաքական ուժերին: Տարբեր վարքագիծ կարող են դրսևորել նրանք: Աստված մի արասցե, որ կուսակցական նախկին տիրող վերնախավը կենտրոնի թելադրանքին հլու կանգնի նոր իշխանությունների դեմ սադրանքներ սարքելու ճանապարհին: Մեկ անգամ արդեն (դարասկզբին) հայ կոմունիստները քաղաքական միամտությամբ խաբվել են կուսակցական բարձր ղեկավարության հոչակած լոզունգներին և հաշտնի է, թե դա ինչքան թանկ է նստել մեր ժողովրդին: Այսուհետև քաղաքական ամեն մի դավանանք հայ իրականության մեջ պատմականորեն զրկված է ազգային շահերը իրենն ստորադասելու իրավունքից: Իրոք, դժվար է հայ կոմունիստների վիճակը: Ո՞ր հասարակական ուժն են նրանք ներկայացնում, ո՞րն է նրանց սոցիալական հիմքը: Առաջին բանը, որ մարդու մտքին գալիս է, այն է, որ կոմունիստները սոցիալիստական գաղափարի շուրջը համախմբվելով, կարող են վերածվել աշխատավորական կուսակցության: Դա արտակարգ բարդ խնդիր է, եթե հաշվի առնելու լինենք, որ կոմունիստների ջանքերով ինչպես է վարկաբեկվել սոցիալիզմի գաղափարը, և թե կգտնվե՞ն, արդյոք, չվարկաբեկված կոմունիստներ այս մաքուր գաղափարի շուրջը մաքուր ձեռքերով խմբվելու համար: Սա, ըստ էության, նոր կուսակցության ձևակերպման խնդիր է՝ կապված նախորդ գաղափարական ու քաղաքական կեղտաբեռից ազատվելու հետ:

Կոմունիստների խնդիրների վրա մենք հատուկ դիտավորությամբ երկար կանգ առանք: Դա պատմության դաս է: Եվ այդ դասի իմաստն այն է, որ առանց որոշակի հասարակական հիմքի ամեն մի կուսակցության սպասում է պարտոկրատական հանցախմբերի վերածվելու որոգայթը:

Եվ հենց հիմա նոր քաղաքական ուժերի մասին խոսելու ժամանակն է: Պա՞րզ է, արդյոք, նրանց համար, թե հասարակական ինչ ուժեր (խմբեր, խավեր, դասակարգեր՝ եթե դրանք կան) են իրենք միավորում և ներկայացնում: Հայոց համազգային շարժումը, գաղտնիք չէ, իշխանության անցել է ազգային շարժման ալիքի վրայով: Ազգային արդարության խնդիրները պատմության այս պահին հանրապետությունում գերակայում են սոցիալական արդարության խնդիրների վրա (1917-ին [illegible]՝ սոցիալական արդարության խնդիրները ստվերում էին ազգային արդարության հարցերը): Բայց Հայաստանի ներսում (տիյուրքի գործը այլ է) քաղաքական և ոչ մի ուժ չի կարող երկարատև խուսափել ներքին հասարակական կողմնորոշումներից, սեփական հասարակական հիմքի հստակումից, քանի որ արդեն իսկ այսօր մեր ժողովուրդը սոցիալապես միատարր չէ: Շերտավորումը կուժեղանա մանավանդ ազատ շուկայական հարաբերություններին և սեփականության ձևերի բազմազանությանն անցնելուց հետո, և հասարակական տարբեր խմբեր անխուսափելիորեն կունենան իրենց քաղաքական կազմակերպությունները: Այնպես որ, բազմակուսակցականությունը ֆրազ չէ: Իրավական հասարակության մեջ այն տարբեր հասարակական խմբերի քաղաքական հարաբերությունների կարգավորման ժողովրդավարական ձև է: Ինչքան էլ փնովենք մեր սերտած հասարակագիտությունը, այս դրույթը պատմության տրամաբանությամբ՝ մնում է ուժի մեջ:

Միակ հնարավոր հակափաստարկը այն կարող է լինել, թե Հայաստանի առանձնահատուկ պատմական պայմաններում հնարավոր է ստեղծել կուսակցություն, որը ներկայացնի ամբողջ ազգի շահերը: Բայց այդ դեպքում մենք չե՞նք կրկնի կոմունիստների կատարած **սխալը**...